ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
16 մայիսի 2025 թվական, N 86-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԼՃԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 0.06 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ հոդվածով, 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 5) կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, հաշվի առնելով այն փաստը, որ հողի նկատմամբ վարձակալության իրավունքը ծագել է Հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետով և այն փոխանցվել է Հարություն Շոլինյանին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 564-րդ հոդվածի 04/10/2005թվականի խմբագրությամբ, ինչպես նաև հողի վարձավճար երբևէ չվճարելու հանգամանքը, հիմք ընդունելով լճերի այգում նախատեսված քաղաքաշինական ծրագիրը, վերակառուցման, բարեկարգման անհրաժեշտությունը, վարձակալության իրավունքի 28/07/2007թ. N 2267778 վկայականը.

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաշվի առնելով համայնքի և համայնքի հանրության շահը՝ դադարեցնել Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքում գտնվող դեկորատիվ լճի զբաղեցրած տարածքի նկատմամբ Հարություն Շոլինյանի անվամբ գրանցված 0.06 հա մակերեսով վարձակալության իրավունքը:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին հանձնարարել՝ բանակցություններ վարել Հարություն Շոլինյանի հետ վարձակալության իրավունքը դադարեցնելու համար, վերջինիս անհամաձայնության դեպքում հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը հարկադիր կարգով դադարեցնել դատական կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ			

2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
8.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
11.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
12.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
13.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
14.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
15.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., մայիսի 16,
Լոռու մարզ, ք. Ալավերդի